ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՂ ՊՏՂՈՒՆՔ
Հ/Հ 900322235038
ՀՎՀՀ –04701766
ԻՆԴԵՔՍ 1145

ՀԵՌԱԽՈՍ 02316-35-50

РА АРМАВИРСКАЯ
ГУБЕРНЯ СЕЛО ПТГУНК
ИНДЕКС 1145
ТЕЛ.0231 6-35-50
RA THE MARZ OF ARMAVIR
VILLAGE PTGHUNK
INDEX 1145

---

թիվ 01-32 02.04 2012թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն՝ Ա.Ղահրամանյանին

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Ձեզ եմ ներկայացնում 2012 թվականի մարտ ամսվա ընթացքում Արմավիրի մարզի Պտղունք համայնքի ղեկավարի արձակած կարգադրությունները և ընդունած որոշումները։

Առդիր 4 էջ։

Պտղունք համայնքի ղեկավար՝ /Ս.Ջեյնալյան/

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 3306-12
«06» 04 2012թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզի
Պտղունք համայնք, 0231-6-35-50, ptghunk 1@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

« 19» Մարտ 2012 թվականի N 8

## ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով. որոշում եմ՝

1.2012 թվականի մայիսի 6-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններին Պտղունք համայնքի տարածքում տեղամասային կենտրոն սահմանել՝ Արարատյան թիվ 3 հասցեի Պտղունք համայնքի «Տիգրան Մեծի անվան» միջնակարգ դպրոցի շենքը:

2.Տարածքի տիրապետող նշանակել Պտղունք համայնքի աշխատակազմի քարտուղար՝ Կարապետ Արշավիրի Արթենյանին

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՁԵՅՆԱԼՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզի
Պտղունք համայնք, 0231-6-35-50, ptghunk 1@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«5» Մարտ 2012 թվականի N 7

## ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով. որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող թեկնածուների և կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) քարոզչական տարածքներ պաստառներ փակցնելու համար Պտղունք համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

1) Հ.Շիրազի փողոց – 24մ.ք

2) Անդրանիկի փողոց – 16մ.ք

3) Արարատյան փողոց – 15մ .ք

2.Սույն որոշման օրինակն ուղարկել Կենտրոնական ընտրական հանձնաժողով

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՁԵՅՆԱԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 01» մարտի 2012թ. Թիվ 3

# ԱՐՏԱԿ ՎԱԼԵՐԻԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 106-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով Արտակ Վալերիի Հովհաննիսյանի 2012 թվականի փետրվարի 24-ի դիմումը.

Կարգադրում եմ՝

1.2012 թվականի մարտի 1-ից լուծել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունք համայնքի ղեկավարի տեղակալ՝ Արտակ Վալերիի Հովհաննիսյանի հետ անորոշ ժամկետով կնքած աշխատանքային պայմանագիրը՝ ազատելով նրան աշխատանքային պարտականություններից:

2.Առաջատար մասնագետին (Հ.Հարությունյանին) սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ:

3.Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Պտղունք համայնքի ղեկավար՝ /Ս.Զեյնալյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 01» մարտի 2012թ. Թիվ 4

# ԷԴԻԿ ԱՐՄԵՆԻ ԱՐԱԲՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 84-րդ, 85-րդ և 94-րդ հոդվածներով և հիմք ընդունելով էդիկ Արմենի Արաբյանի 2012 թվականի փետրվարի 29-ի դիմումը.

Կարգադրում եմ՝

1.Էդիկ Արմենի Արաբյանի 2012 թվականի մարտի 1-ից ընդունել աշխատանքի Արմավիրի մարզի Պտղունքի գյուղապետարանում որպես համայնքի ղեկավարի տեղակալ անորոշ ժամկետով, նրա հետ կնքել պայմանագիր:

2.Առաջատար մասնագետին (Հ.Հարությունյան) աշխատավարձը հաշվարկել և վճարել համաձայն 2012 թվականի հաստատված հաստիքացուցակի:

3.Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Պտղունք համայնքի ղեկավար՝ /Ս.Ջեյնալյան/